# ՀԱՇԻՒ

ԹԻՖԼԻԶԻ

# ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

## 1895 Թ.

ՏԱՍՆ ՈՒ ՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՏՓԽԻՍ
*Տպարան Մ. Շարաձէի եւ Ընկ. Նիկ.* 21.
Тип. М. Шарадзе и К°.
*1896*

2239 ա

Дозволено цензурою, Тифлисъ. 23 Марта 1896 г.

## Ա. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Ընկերութեան պատուաւոր նախագահ թեմիս վիճակաւոր Ս. Առաջնորդն Հայոց Վրաստանի և Իմերէթի։

Ընկերութեան պատուաւոր անդամք՝ պ. Աղէքսանդր Քիշմիշեան
տ. Վարվառէ Ռօտինեան

### I. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Ատենապետուհի՝ տ. Սոֆիա Բաբայեան
Փոխ-Ատենապետուհի՝ տ. Եղիսաբէթ Թայիրեան

Անդամք
- տ. Աննա Մամիկոնեան
- տ. Վարվառէ Մելեան
- օր. Իշխ. Սոֆիա Արղութեան-Երկայնաբազուկ
- օր. Եղիսաբէթ Աւթանդիլեան

Գանձապահ՝ օր. Կատարինէ Մուխթաֆեան

### II. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄՔ

+ Ադամեան (Ներսիսեան) Թամարա (1882)
Աբամելիքեան Եփրոսիմէ կոյս (1889)
տ. Ալիխանեան Նադեժդա (1887)
տ. Ալիխանեան Կատարինէ (1882)
տ. Ալէլեան Վարվառէ (1886)
տ. Աղաբէգեան Մարիամ (1882)
տ. Արամակլիսեան Նունէ (1887)
տ. Արամեան Եղիսաբէթ (Բագուից) (1890)
Արղութեան Կատարինէ Մայրապետ (1884)
իշխ. Արղութեան Մարիամ (1884)
իշխ. Արղութեան Մարիամ (1888)
իշխ. Արղութեան Կատարինէ (1882)
տ. Ադէլխանեան Հեղինէ (1892)
տ. Աճամեան Հեղինէ (Մոսկուայից) (1892)
տ. Այվազեան Կատարինէ (1892)
տ. Աւթանդիլեան Հեղինէ (1891)
+ Բաղդոյեան Թեկղէ (Թելաւից) (1892)
իշխ. Բէհբուդեան Կատարինէ (1890)
իշխ. Բէհբուդեան Վարվառէ (1882)
իշխ. Բէկթաբէգեան Մարիամ (1883)
տ. Դաւթեան Մարիամ (1889)
տ. Դոլուխանեան Եղիսաբէթ (1890)
տ. Եարալեան Կատարինէ (1893)
+ Եւանգուլեան Կատարինէ (1890)
+ Եւանգուլեան Նունէ (1888)
տ. Էմինեան Աննա (1882)
տ. Ենակոլոփեան Նատալիա (1883)

տ. Թալէոսեան Աննա (1895)
տ. Թամամշեան Սոֆիա (1890)
տ. Թամամշեան Վարվառէ (1888)
տ, Թայիրեան Եղիսաբէթ (1884)
+ Թայիրեան Կատարինէ (1882)
Թայիրեան Հռիփսիմէ կոյս (1883)
տ. Իստամանեան Սալոմէ (1892)
տ. Լիանոզեան (Մոսկուայից) (1883)
տ. Խատիսեան Մարիամ (1890)
տ. Խարազեան Վարվառէ (1882)
Խուփեան Փեփրոնեա կոյս (1889)
+ Խուդադեան Վարդուհի (1892)
տ. Ծովիանեան Մայա (1882)
տ. Ծովիանեան Մարիամ (1889)
տ. Ծովիանեան Մարիամ (1892)
տ. Ծովիանեան Կատարինէ (1893)
տ. Կամսարական Աննա (1884)
+ Ղամբարեան Նունէ (1884)
տ. Ղորղանեան Աննա (1892)
տ. Մանթաշեան Դարիա (1882)
+ Մելիքեան Աննա (1883)
տ. Մեհրաբեան Կատարինէ (1887)
տ. Միրզոյեան Դարիա (1888).
տ. Մութաֆեան Շողակաթ (1890)
տ. Ցակոբեան Կատարինէ (1895)
տ. Նադիրեան Կատարինէ (1882)

տ. Նազարբէգեան Մինա (1882)
տ. Նազարբէգեան Նունէ (1889)
+ Ջանումեան Մինա (Մոսկուայից) (1883)
+ Ռոտինեան Կատարինէ (1883)
տ. Ռոտինեան Նատալիա (1892)
տ. Ռոտինեան Վարվառէ (1893)
տ. Սարգսեան Եղիսաբէթ (Բագուից) (1889)
տ. Ստեփանեան Նունէ (Մոսկուայից (1892)
տ. Ստեփանեան Ծաղիկ (Բագուից) (1891)
տ. Վարդանեան Նունէ (1895)
+ Վարլամեան Վարվառէ (1888)
տ. Տէր- Աստուրեան Վարվառէ (1893)
տ. Տէր-Ցակոբեան Եւալինա (1894)
տ. Տէր-Յովսէփեան Ովսաննա (1895)
տ. Քանանեան Նատալիա (Մոսկուայից (1892)
տ. Քանանեան Վարվառէ (Մոսկուայից (1882)
տ. Քալանթար Սոֆիա (1892)
տ. Քալանթարեան Սոֆիա (1893)

---

## III. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄՔ

### Ա.

իշխ. Աբամելիքեան Դարիա
տ. Աբիսողոմեան Նունէ
տ. Աբովեան Շուշանիկ
տ. Ալիբէգեան Նունէ
տ. Ալիխանեան Մարիամ (Բագուից)
տ. Ալիխանեան Վարվառէ
օր. Ախվերդեան Աննա
օր. Ախվերդեան Մանիա
տ. Ամբարդանեան Վարվառէ
տ. Անանեան Մարիամ

տ. Անանեան Օլգա
տ. Առաքելեան Եղիսաբէթ
տ. Արղումանեան Սոֆիա
տ. Արղումանեան Փառանձեմ
իշխ. Արղութեան Կատարինէ
իշխ. Արղութեան Մարիամ
իշխ. Արղութեան Նադեժդա
իշխ. Արղութեան Սոֆիա
օր. Աւթանդիլեան Եղիսաբէթ
տ. Աւետիսեան Իսկուհի
տ.Ափեան Սոֆիա
տ. Աքիմեան Մարիամ



### Բ.

օր. Բաբայեան Արմենուհի
օր. Բաբայեան Մարգարիտ
տ. Բաբայեան Սոֆիա
տ. Բաբանասեան Թամարա
օր. Բայսողոլեան Շուշանիկ
իշխ. Բէկթաբէգեան Եղիսաբէթ
իշխ. Բէհբութեան Եղիսաբէթ
օր. Բէնքլեան Վարդուհի
տ. Բերէնս Մարիամ

### Գ.

տ. Գէորգեան Եղիսաբէթ
տ. Գէորգեան Նունէ
տ. Գէորգեան Սոֆիա
տ. Գիրգիդեան Եղիսաբէթ

### Դ.

տ. Դաւթեան Կատարինէ
օր. Դաւթեան Կատարինէ
տ. Դաւթեան Մարիամ
տ. Դէմուրեան Եղիսաբէթ

### Ե.

տ. Եարալեան Կատարինէ
տ. Եղիազարեան Կատարինէ
տ. Երեցփոխեան Սրբուհի
տ. Երիցեան Սրբուհի

### Զ.

տ. Զարգարեան Նունէ

### Է.

տ. Էլիմիրզեան Սալոմէ
տ. Էնակոլոփեան Եղիսաբէթ
տ. Էնակոլոփեան Մարիամ
իշխ. Էրիստովա Կատարինէ
տ. Էնֆիաճեան Աննա

### Թ.

տ. Թամամշեան Նունէ
տ. Թամամշեան Սոֆիա
տ. Թամամշեան Սոֆիա
տ. Թամամշեան Վարվառէ
իշխ. Թումանեան Աննա
իշխ. Թումանեան Մարիամ
իշխ. Թումանեան Նունէ
տ. Թումեան Եղիսաբէթ
տ. Թուսիկեան Եղիսաբէթ

### Ի.

տ. Իզմայլեան Աննա
տ. Իզմիրեան Սոֆիա

### Լ.

տ. Լալայեան Շուշանիկ (Բագուից)
տ. Լիսինեան Քեթեւան
օր. Լօռիս-Մելիքեան Եղիսաբէթ

### Խ.

տ. Խալաթեան Կատարինէ
տ. Խանդամիրեան Նատալիա
տ. Խաչատրեան Մարիամ
տ. Խաչատրեան Նունէ
օր. Խարազեան Թամարա
տ. Խարազեան Մարիամ
տ. Խուդադեան Մարիամ
տ. Խուդավերդեան Սրբուհի
իշխ. Խօջամիրեան Սոֆիա
տ. Խօջայեան Սոֆիա

### Ծ.

տ. Ծատուրեան Վարդուհի
տ. Ծովիանեան Լիզա
տ. Ծովիանեան Մարիամ
տ. Ծովիանեան Սոֆիա
տ. Ծուրինեան Աննա

## Կ·

տ. Կարախանեան Մարիամ
տ. Կաֆաֆովա Մարիամ
տ. Կիրակոսեան Թամարա
տ. Կիրիեան Գայիանէ (Քութայիսից)
տ. Կուսիկեան Մարիամ
տ. Կրասիլնիկեան Աննա

## Ղ·

տ. Ղազազեան Սոֆիա (Կարսից)
տ. Ղազարեան Սաթենիկ
տ. Ղամբարեան Նունէ (Ռիգայից)
տ. Ղարաջեան Նատալիա
տ. Ղլրտճեան Սաթենիկ
տ. Ղորղանեան Նունէ
տ. Ղորղանեան Նունէ

## Մ·

տ. Մակարեան Մարիամ
տ. Մամիկոնեան Աննա
տ. Մայսուրեան Նատալիա
տ. Մանդինեան Սոֆիա
տ. Մանուէլեան Եւա (Բագուից)
օր. Մատինեան Մարիամ
տ. Մարդանեան Վարվառէ
տ. Մարտիրոսեան Հայկանուշ
տ. Մեասնիկեան Եղիսաբէթ
տ. Մելիքեան Մարիամ
տ. Մելիք-Ադամեան Կատարինէ
տ. Մելիք-Բաղդամեան Նունէ
տ. Մելիք Ղարագեօզեան Կատարինէ
տ. Մերզոյեան Թեկլի
տ. Մերզոյեան Նունէ
տ. Մերզոյեան Սոֆիա
տ. Միլեան Վարվառէ
օր. Միրիմանեան Թամարա
տ. Միրիմանեան Մարիամ
տ. Միրիմանեան Նատալիա
տ. Միրիմանեան Նունէ
տ. Միրիմանեան Վէրա

օր. Մուլթաֆեան Կատարինէ
օր. Մուլթաֆեան Մարիամ

## Յ·

տ. Յարոյ Դարիա
տ. Յարութիւնեան Մարիամ
տ. Յովհաննիսեան Դարիա
տ. Յովհաննիսեան Շուշանիկ
տ. Յովսէփեան Նունէ

## Ն·

տ. Նազարեան Եղիսաբէթ

## Շ·

տ. Շադինեան Վարվառէ
տ. Շադինեան Քալիա
տ. Շամսարեան Եղիսաբէթ
օր. Շահիկեան Մարիամ
տ. Շահնազարեան Նատալիա
օր. Շահպարոնեան Մարիամ

## Չ·

օր. Չիթախեան Աննա
տ. Չիթախեան Սոֆիա

## Պ·

տ. Պատուականեան Նատալիա (Բագուից)

## Ջ·

տ. Ջանփոլադեան Թագուհի (Կաղզուանից)
տ. Ջառահեան Խանում

## Ռ·

տ. Ռոստինեան Կատարինէ
տ. Ռոստինեան Նատալիա
տ. Ռոստինեան Սոֆիա



## Ս·

տ. Սալավեօվա Վարվառէ
տ. Սարուխան-Բէգեան Մարիամ
տ. Սարուխանեան Եղիսաբէթ
օր. Սերեբրակեան Մարիամ
տ. Սմիռնովա Եղիսաբէթ
օր. Սողալեան Եփեմիա
տ. Սողոմոնեան Աստղիկ
տ. Սուլխանեան Մարիամ
տ. Սուլխանեան Շուշանիկ
տ. Սունդուկեան Սոֆիա
օր. Սուրէնեան Սոֆիա
տ. Ստեփանեան Աննա
տ. Ստեփանեան Եղիսաբէթ
տ. Ստեփանեան Սոֆիա

## Վ·

տ. Վարդազարեան Եղիսաբէթ
օր. Վարդազարեան Մարիամ
տ. Վարդանեան Եւգենիա
տ. Վարդապետեան Յուսիկ
օր. Վերմիշեան Մարիամ
տ. Վէքիլեան Տիրուհի

## Տ·

տ. Տէր-Ազարեան Եւա
տ. Տէր-Գրիգորեան Մարգարիտ
տ. Տէր-Գրիգորեան Վարվառէ
տ. Տէր-Դաւթեան Եղիսաբէթ
տ. Տէր-Ղեւոնդեան Սոֆիա
տ. Տէր-Յակոբեան Սոֆիա
տ. Տէր-Յովհաննիսեան Ոսկեհատ
տ. Տէր-Ջանեան Սոֆիա
տ. Տէր-Սարգսեան Թամարա
տ. Տիգրանեան Նատալիա

## Ց·

տ. Ցիցիկեան Եփեմիա

## Փ·

տ. Փարեշեան Նատալիա
տ. Փիրադեան Եղիսաբէթ
տ. Փոնդոյեան Կատարինէ
տ. Փսարեան Նունէ
տ. Փրիդոնեան Մարիամ
+ Փրիդոնեան Նունէ

## Ք·

տ. Քալանթարեան Մարիամ
տ. Քիշմիշեան Թամարա

## Օ·

տ. Օհանջանեան Կատարինէ
օր. Օրբելի Կատարինէ

# Բ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

| ՄՈՒՏՔ | Առանձին Ռ. | Առանձին Կ. | Ընդամենը Ռ. | Ընդամենը Կ. |
|---|---|---|---|---|
| ա) Նախորդ տարուանից մնացած գոյք՝ | | | | |
| I Առևտրական բանկում ընթացիկ հաշուով . . . . | 1487 | 85 | | |
| Առ ձեռն դրամ . . . . . . . . . . . | 350 | 3 | | |
| Առձեռն դրամ խոհարարական դպրոցի կառավարչուհու մօտ | 50 | 61 | 1888 | 49 |
| II Տոկոսաբեր թղթեր 13000 ռ. գումարի, որ ընդունուած է և գնուած . . . . . . . . . . . | — | — | 12385 | 86 |
| | | | 14274 | 35 |
| բ) Նուիրաբերութիւններ. | | | | |
| Հանգուցեալ Եփեմիա Սուքէնեանի ժառանգներից . . | 50 | | | |
| Տ. Կատարինէ Մելիք-Ղարագեօզեանից 'ի յիշատակ իւր հանգուցեալ ամուսնու՝ Բալաբէկ Մելիք-Ղարագեօզեանի. | 200 | | | |
| Հանգուցեալ Նունէ Տէր-Գրիգորեանի ժառանգներից . . | 300 | | | |
| Իշխ. Սոֆիա Արղութեանից 'ի յիշատակ իւր հանգուցեալ հօրեղբօր՝ իշխ. Աղէքսանդր Արղութեանի . . . . | 100 | | | |
| Տ. Փրիդոնեանից 'ի յիշատակ իւր հանգուցեալ դստեր՝ Նունէ Փրիդոնեանի . . . . . . . . . . | 200 | | | |
| Ներսիսեան Հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնից Էֆէնդիանի գումարից . . . . . . . . . . | 60 | | | |
| Հանգուցեալ Յովսէփ Ալէլեանի կտակած գումարից . . | 100 | | 1010 | |
| գ) Մանկամսուրի և վարչութեան հանգանակած գումարը | | | | |
| Սուրբ Նշան եկեղեցու դպրոցի շինութեան համար . . | — | — | 1814 | 50 |
| դ) Անդամակցական վճարներ. | | | | |
| Իսկական (176 անդամ) . . . . . . . . | 1056 | | | |
| Մշտական (4 անդամ) . . . . . . . . | 400 | | | |
| Տ. Եղիսաբէթ Կրասիլնիկեանից անդամակցական վճար 1894 թ. . . . . , . . . . . . . . | 6 | | 1462 | |
| ե) Պարահանդէսներից, նուագահանդէսներից և այլն. | | | | |
| Երեք ներկայացումից . . . . . . . . . | — | — | 2089 | 86 |
| զ) Տոկոսիք ընկերութեան գումարից | | | | |
| Ընթացիկ հաշուից . . . . . . . . . . | 15 | 64 | | |
| Կտրոններից . . . . . . . . , . . . . . | 611 | 50 | 627 | 14 |
| է) Երկու ուսումնարանի աշակերտուհիներից ուսումնական պիտոյից և ուսման վճար. . . . . | — | - | 471 | |
| ը) Կարուձևի դպրոցի պատուէրներից մուտք . . | — | — | 1265 | |
| թ) Աշակերտուհեաց ձեռագործի վաճառումից . . | — | - | 199 | 33 |
| ժ) Խոհարարական դպրոցի երեք ղասընթացից մուտք . | — | - | 81 | 36 |
| ԳՈՒՄԱՐՆ Է | — | — | 9020 | 19 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 23,294 | 54 |

Բացի այս Ընկերութիւնն ունի երեք հատ Օսմանեան արծաթեայ դրամ, դպրոցական կահ-կարասիք և այլ իրեղէններ:

| ԵԼՔ | Առանձին Ռ. | Առանձին Կ. | Ընդամենը Ռ. | Ընդամենը Կ. |
|---|---|---|---|---|
| ա) Ընդհանուր ծախսեր | | | | |
| Դիւանական ծախսեր . . . . . . . . . . . | 9 | 90 | | |
| Ընդհանուր ժողովի, յայտարարութեանց, տարեկան հաշուի տպագրութեան և այլ մանր ծախսեր . . | 102 | 49 | | |
| Երկու հոգեհանգստի ծախս . . . . . . . | 91 | 70 | 204 | 9 |
| բ) Նուիրատուութիւններ յօգուտ ուսումնարանաց, մասնաւոր անձանց և ընտանեաց՝ | | | | |
| Յօգուտ Զրկինեանց եկեղեցու դպրոցին . . . . . | 50 | | | |
| Սոֆիա Ղալաչեանին գիմնազիայի կէս տարուայ ուսման վճար | 27 | | | |
| Զրօրհնէքին և Զատկին բաժանուած է չքաւոր ընտանեաց | 189 | | | |
| Օժանդակութիւն է տրուած երկու դպրոցի չքաւոր աշակերտուհեաց . . . . . . . . . . . . | 46 | 15 | 312 | 15 |
| գ) Սուրբ Նշան եկեղեցու դպրոցի ծախսեր՝ | | | | |
| Ուսուցչաց և ուսուցչուհեաց ռոճիկ . . . . . . | 2178 | 98 | | |
| Աղախնու ռոճիկ . . . . . . . . . . . . | 144 | - | | |
| Ուսումնական պիտոյք . . . . . . . . . . | 98 | 91 | | |
| Ձեռագործի նիւթեր . . . . . . . . . . . | 37 | 92 | | |
| Վառելափայտ . . . . . . . . . . . . . | 98 | 85 | | |
| Կահ-կարասիք . . . . . . . . . . . . . | 248 | — | | |
| Մանր ծախսեր . . . . . . . . . . . . . | 65 | 23 | | |
| Սուրբ Նշան եկեղեցու դպրոցի շինութեան և իրեղէնների ապահովութեան ծախս . . . . . . . . | 23 | 10 | 2894 | 99 |
| դ) Սուրբ Նշան եկեղեցու դպրոցի շինութեան ծախսեր | — | — | 1295 | |
| ե) Կարուձևի դպրոցի ծախսեր՝ | | | | |
| Ուսուցչուհեաց ռոճիկ . . . . . . . . . . | 1462 | 50 | | |
| Աղախնու և ծառայի ռոճիկ . . . . . . . . | 253 | 60 | | |
| Բնակարանի վարձ մինչև մարտ 1896 թ. . . . . . | 425 | | | |
| Կահ կարասիք. . . . . , . . . . . . . | 17 | | | |
| Վառելափայտ . . . . . . . . . . , . . | 131 | | | |
| Մանր ծախսեր . . . . . , . . . . . . . | 68 | 79 | | |
| Ձեռագործի նիւթեր . . . . . , . . . . . . | 234 | 17 | | |
| Մասնագիտական ամսաթերթեր . . . . . . . . | 40 | | 2632 | 6 |
| զ) Պատուէրներից ստացած արդիւնքից յատկացրած է վարժուհիներին և աշակերտուհիներին | — | — | 501 | 7 |
| է) Ապառիկ 1895 թուի | — | — | 26 | 40 |
| ԳՈՒՄԱՐՆ Է | | | 7865 | 76 |
| 1895 թ. Դեկտ. 31 ընկերութեան գոյքը | | 1) | | |
| Առևտրական բանկում ընթացիկ հաշիւ . . . . . | 1562 | 81 | | |
| Առ ձեռն դրամ . . . . . . . . . . . . | 548 | 14 | | |
| Առ ձեռն դրամ խոհարարական դպրոցի կառավարչուհու մօտ | 131 | 97 | 2242 | 92 |
| 1895 թ. գնուած է տոկոսաբեր թղթեր 800 ռ. գումարի | 800 | | | |
| Անցեալ տարուայ տոկոսաբեր թղթերը . . . . . | 12385 | 86 | 13185 | 86 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | 23294 | 54 |

1) Այս գումարից կարուձևի դպրոցի աշակերտուհեաց պատուէրներից հասանելիք 64 ռ. 90 կ. մնում է Ընկերութեան իբրև աւանդ:

## Б. СРЕДСТВА ОБЩЕСТВА

| *ПРИХОДЪ* | Отдѣльно | | Вмѣстѣ | |
|---|---|---|---|---|
| | Руб. | К. | Руб. | К. |
| а) Остатокъ отъ прошлаго года | | | | |
| I. Текущій счетъ въ Коммерческомъ банкѣ . . . . . | 1487 | 85 | | |
| На рукахъ у казначея . . . . . . . . . . . . | 350 | 3 | | |
| На рукахъ у завѣдывающей кулинарными курсами . | 50 | 61 | 1888 | 49 |
| II. Процентныя бумаги по номинальной цѣнѣ на сумму 13000 р., купленныя и принятыя въ . . . . . . | — | — | 12385 | 86 |
| | | | 14274 | 35 |
| б) Пожертвованія | | | | |
| Отъ наслѣдниковъ покойной Ефеміи Суренянцъ . . | 50 | | | |
| Отъ г-жи Екатерины Меликъ-Каракозянъ въ память покойнаго своего мужа Павла Меликъ-Каракозянъ . | 200 | | | |
| Отъ наслѣдницъ покойной Нины Теръ-Григорянъ . . | 300 | | | |
| Отъ кн. Софіи Аргутянъ въ память покойнаго своего дяди кн. Александра Аргутянъ . . . . . . . | 100 | | | |
| Отъ г-жи Придонянъ въ память покойной своей дочери Нины Придонянъ . . . . . . . . . . | 200 | | | |
| Отъ попечительства Нерсисянъ семинаріи изъ суммъ Эфендіанъ . . . . . . . . . . . . . . . | 60 | | | |
| Изъ суммъ завѣщанныхъ I. Д. Алеловымъ . . . . | 100 | | 1010 | |
| в) Сборъ комитета и комиссіи по постройкѣ Сурбъ-Нишанской щколы . . . . . . . . . . . . | | | 1814 | 50 |
| г) Членскіе взносы | | | | |
| Отъ 176 дѣйствительныхъ членовъ . . . . . . | 1056 | | | |
| Отъ 4 пожизненыхъ членовъ . . . . . . | 400 | | | |
| Отъ г-жи Елизаветы Красильникянъ членскій взносъ за 1894 г. . . . . . . . . . . . . . . | 6 | | 1462 | |
| д) Съ баловъ, концертовъ и проч. | | | | |
| Съ трехъ спектаклей . . . . . . . . . . . | — | — | 2089 | 86 |
| е) Проценты съ суммъ Общества | | | | |
| Отъ текущаго счета въ банкѣ . . . . . . . . | 15 | 64 | | |
| Отъ срочныхъ купоновъ . . . . . . . . . . | 611 | 50 | 627 | 14 |
| ж) Съ ученицъ двухъ школъ за учебныя пособія и за ученіе | — | — | 471 | |
| з) Получено съ заказовъ въ школѣ кройки и рукодѣлія . | — | — | 1265 | |
| и) Отъ продажи ученическихъ работъ . . . . . . | — | — | 199 | 33 |
| і) Отъ трехъ кулинарныхъ курсовъ . . . . . . . | — | — | 81 | 36 |
| Итого . . . | | | 9020 | 19 |
| Итого . . . | | | 23294 | 54 |

| *РАСХОДЪ* | Отдѣльно | | Вмѣстѣ | |
|---|---|---|---|---|
| | Руб. | К. | Руб. | К. |
| а) Общіе расходы | | | | |
| Канцеларскіе . . . . . . . . . . . . . . . | 9 | 90 | | |
| Расходы на устройство Общаго Собранія, на печатаніе отчета, объявленій и проч. . . . . . . | 102 | 49 | | |
| Расходы по двумъ панихидамъ . . . . . . . . | 91 | 70 | 204 | 9 |
| б) Пожертвованія въ пользу школъ и частныхъ лицъ: | | | | |
| Въ пользу Зркинянцъ церковно-приходской школы . | 50 | | | |
| Выдано Софіи Калачянъ за правоученіе въ гимназіи . | 27 | | | |
| На Рождество и Пасху роздано бѣднымъ, . . . . | 189 | | | |
| Выдано пособіе ученицамъ двухъ школъ . . . . . | 46 | 15 | 312 | 15 |
| в) Расходы Сурбъ-Нишанской школы | | | | |
| Жалованье учителямъ и учительницамъ . . . . . | 2178 | 98 | | |
| Жалованье прислугѣ . . . . . . . . . . . . | 144 | — | | |
| Учебныя пособія . . . . . . . . . . . . . | 98 | 91 | | |
| Матеріалы для рукодѣлія . . . . . . . . . . | 37 | 92 | | |
| Отопленіе . . . . . . . . . . . . . . . . | 98 | 85 | | |
| Классная мебель . . . . . . . . . . . . . | 248 | | | |
| Мелкіе расходы . . . . . . . . . . . . . . | 65 | 23 | | |
| Страхованіе зданія и вещей Сурбъ-Нишанской школы . | 23 | 10 | 2894 | 99 |
| г) На постройку зданія Сурбъ-Нишанской школы . . . | — | — | 1295 | |
| д) Расходы школы кройки и рукодѣлія: | | | | |
| Жалованье учительницамъ, мастерицамъ . . . . . | 1462 | 50 | | |
| Жалованье прислугѣ . . . . . . . . . . . . | 253 | 60 | | |
| Уплачено за квартиру по 1-ое Марта 1896 г. . . . | 425 | — | | |
| Мебель . . . . . . . . . . . . . . . . . | 17 | — | | |
| Отопленіе . . . . . . . . . . . . . . . . | 131 | — | | |
| Матеріалы для рукодѣлія . . . . . . . . . . | 234 | 17 | | |
| Мелкіе расходы . . . . . . . . . . . . . . | 68 | 79 | | |
| Модные журналы . . . . . . . . . . . . . . | 40 | — | 2632 | 6 |
| е) Выдано учительницамъ, мастерицамъ школы кройки и рукодѣлія процонтовъ съ доходовъ отъ заказовъ . . | — | — | 501 | 7 |
| ж) Недоимки 1895 года . . . . . . . . . . . . | | | 26 | 40 |
| Итого | | | 7865 | 76 |
| Текущій счетъ въ Коммерческомъ банкѣ . . . . . | 1562 | 81* | | |
| На рукахъ у казначея . . . . . . . . . . . . | 548 | 14 | | |
| На рукахъ у завѣдывающей кулинарными курсами . | 131 | 97 | 2242 | 92 |
| Въ 1895 г. пріобрѣтены процентныя бумаги по номинальной цѣнѣ на сумму 800 р. . . . . . | 800 | — | | |
| Процентныя бумаги отъ прошлаго года . . . . . | 12385 | 86 | 13185 | 86 |
| Итого | | | 23294 | 54 |

*) Въ эту сумму входятъ 64 ф. 90 к., принадлежащіе ученицамъ школы кройки и рукодѣлія за исполненные ими заказы.

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ 7 ԱՊՐԻԼԻ 1895 Թ.

---

*Ապրիլի 7-ին 1895 Թ. Սուրբ-Նշան եկեղեցւոյ ծխական ուսումնարանի դահլիճում կայացաւ Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը՝ ներկայութեամբ 68 անդամի։ Ժողովին նախագահում էր Թեմիս Առաջնորդ Նորին Բարձր Սրբազնութիւն Գէորգ Արքեպիսկոպոս Սուրէնեանցը։ Նիստը բացուեց ժամը 1-ին։*

*Վարչութեան ատենապետուհի տ. Սոֆիա Բաբայեանը կարդաց անցեալ տարուայ ընդհանուր ժողովի արդէն տպած արձանագրութիւնը, որ և ընդհանուր ժողովը հաստատեց։ Այնուհետև վարչութեան անդամ տ. Կատարինէ Եւանգուլեանը կարդաց անցեալ տարուայ ել և մտից հաշիւը։ Ապա բարձր Սրբազան Նախագահը հարցրեց, թէ արդեօք ժողովականները բան ունին ասելու կարդացածի մասին։*

*Օր. Ն. Ամիրխանեան.—Ընկերութեան հաշիւն անկանոն է տպւում, պէտք է նաև անցեալ տարուայ հաստատուած նախահաշիւը տպուի, որպէսզի Ընկերութեան անդամները կարողանան տեսնել, թէ որքան համապատասխան է Ընկերութեան ելևմուտքը հաստատուած նախահաշուի հետ։*

*Տիկ. Բաբայեանը.—Մինչև այժմ այդպիսի հարց չէ արծարծուել և եթէ ընդհանուր ժողովն ընդունի այդ առաջարկութիւնը՝ վարչութիւնը դրան դէմ չի լինիլ։*

*Տիկ. Ս. Քալանթար.—Ամեն ընկերութեան հաշուի հետ տըպւում է նոյնպէս հաստատուած նախահաշիւը։*

*Տիկ. Կ. Եւանգուլեան.—Եթէ ուրիշ ընկերութիւնների հաշիւների հետ կայ տպած նաև նախահաշիւը, մենք էլ այնպէս կվարուենք այսուհետև։*

*Սրբազան Նախագահը հաստատեց այդ վերջի կարծիքը։ Ընդհանուր ժողովի այդ օրուայ պարապմանց երրորդ հարցը վարչութեան կազմած հետևեալ նախահաշիւն էր 1895 Թ. համար, որ կարդաց տ. Կ. Եւանգուլեանը։*



## ՄՈՒՏՔ

| | Ռ. |
|---|---|
| 1. Ընկերութեան մշտական անդամներ (3) . . . . | 300 |
| 2. Ընկերութեան իսկական անդամներ (160) . . . | 960 |
| 3. Յօգուտ Ընկերութեան տուած պարահանդէսներից, ներկայացումներից և այլն . . . . . . . . | 1964 |
| 4. Այլ և այլ անձանց, եկեղեցեաց նուիրաբերութիւններից | 800 |
| 5. Տոկոսիք Ընկերութեան արժետոմսերից, և ընթացիկ հաշուից . . . . . . . , . . | 620 |
| 6. Սուրբ-Նշան եկեղեցւոյ ծխական և կարուձևի դպրոցների աշակերտուհիներից ուսման և ուսումնական պիտոյից վճար . . . . . . : . . | 600 |
| 7. Կարուձևի դպրոցի պատուէրներից . . . . | 1000 |
| 8. Աշակերտուհեաց ձեռագործի վաճառումից . . . | 275 |
| 9. Խոհարարական բաժնից մուտք . . . . . . | 115 |
| ԳՈՒՄԱՐ | 6634 |

## ԵԼՔ

| | |
|---|---|
| 1. Սուրբ-Նշան եկեղեցւոյ դպրոցի պահպանութիւնը՝ | |
| ա) Ռոճիկներ ուսուցչաց և ուսուցչուհեաց . . . . . | 2253 |
| բ) Ուսումնական պիտոյք . . . . . . . . | 200 |
| գ) Ձեռագործի նիւթեր . . . . . . . . | 50 |
| դ) Աղախնու ռոճիկ . . . . . . . . . | 144 |
| ե) Վառելափայտ . . . . . . . . . | 160 |
| զ) Կահ կարասիք . . . . . . . . . | 200 |
| է) Մանր ծախսեր . . . . . . . . . | 50 |
| ը) Գրադարանի համար գրքեր . . . . . . | 15 |
| | 3072 |
| 2. Կարուձևի դպրոցի պահպանութիւնը՝ | |
| ա) Ռոճիկ ուսուցչուհեաց . . . . . : . . | 1520 |
| բ) Փայտ և ածուխ . . . . . . . . . | 120 |
| գ) Կահ-կարասիք . . . . . . . . . | 50 |
| դ) Մանր ծախսեր . . . . . , . . . | 100 |
| ե) Բնակարանի վարձ 1895 Սեպտ.—1896 Յունվ. և ջրի փող . . . . . . . . . . . | 284 |
| զ) Ռոճիկ աղախնուն և ծառային . . . . . | 248 |
| է) Ձեռագործի նիւթեր . . . . . . . . | 300 |
| ը) Օրագրեր կարուձևի համար . . . . . . | 30 |
| | 2652 |

| | |
|---|---|
| 3. Այլ և այլ անձանց, ուսանողաց և ուսումնարանաց օ. ժանդակութիւն . . . . . . . . . | 500 |
| 4. Դիւանական ծախսեր . . . . . . . . . | 10 |
| 5. Վարչութեան ծախսեր, յայտարարութեանց, Ընկերութեան տարեկան հաշուի տպագրութեան, ընդհանուր ժողովի և այլն . . . . . . . . . | 100 |
| ԳՈՒՄԱՐ | 6334 |

Սրբազան Նախագահն առաջարկեց երկրորդ անգամ կարդալ, եթէ ժողովականներին նախահաշուի որևէ կէտը պարզ չէ։ Բայց ընդհանուր ժողովը նախահաշուի ամեն մի կէտը պարզ հասկանալով՝ հաստատեց նոյնութեամբ։

Այնուհետև տիկ. Բաբայեանը յայտնեց մանրամասնօրէն վարչութեան միամեայ գործունէութիւնը, որից իմացուեց, թէ 1893 թ. Մայիսի 3-ին ընդհանուր ժողովին, նախագահութեամբ Բարձր Սրբազան Առաջնորդի՝ վարչութեան 4 անդամի ընտրութիւն է եղել և ձայների բազմութեամբ ընտրուել են տ. տ. Սօփիա Բաբայեան, Եղիսաբէթ Թալիրեան, Կատարինէ Եւանգուլեան և Մարիամ Բէգթաբէգեան։ Իսկ վարչութեան մէջ մնացող 3 անդամներն էին՝ օր. Կատարինէ Մութաֆեան (գանձապահ), տիկ. Ոսկեհատ Տէր-Յովհաննիսեան և օր. Սոֆիա Արղութեան։ Իշխանուհի Բէգթաբէգեանը հոկտեմբերին իւր հրաժարականն է ուղարկել վարչութեանը և նրա տեղ վարչութեան անդամ հրաւիրուել է օր. Եղիսաբէթ Աւթանդիլեանը, իբրև առաջին փոխ-անդամ։ Նոյն Մայիսի 3-ի ընդհանուր ժողովի որոշմամբ, վարչութիւնը 200 ռ. յանձնելու էր Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեանը հիմնուելիք դասընթացների համար՝ ծխական ուսումնարանների վարժապետներ և վարժուհիներ պատրաստելու, որպէսզի վերջինները կարողանան ցէնզ ստանալ. սակայն վերոյիշեալ դասընթացների բացումը յաջողութիւն չունեցաւ և այդ պատճառով վարչութիւնը որոշեց 4 վարժուհի պատրաստել վերոյիշեալ գումարով։ Վարչութեան անդամ օր. Ս. Արղութեանը իւր ուսումնարանում առանձին վարժապետ վարձեց նոցա համար ամսական 40 ռ.։ Վարչութեան ընտրած 4 վարժուհիներն էլ գաւառներից էին — Ցխինվալից, Ղուբայից, Ղարսից և Սուրամից. դոցա վրայ ծախսուել է 100 ռ., իսկ մնացած 100 ռ. դեռ Ընկերութեան գանձարանումն է և յատկացրած է նոյն վարժուհիների քննութեան և վկայականների ծախսի համար։



Վարչութիւնը իւր միջոցներն աւելացնելու նպատակով՝ ունեցել է մի ներկայացում 627 ռ. եկամուտով։

Զանազան անձինքներից և հիմնարկութիւններից խորին շնորհակալութեամբ ստացուել է 1693 ռ.

Սուրբ-Նշանի IV բաժանմունքով երկդասեան ուսումնարանի պահպանելու համար ծախսուել է 1854 ռ. 84 կ.։ Այդ ուսումնարանում սովորել են $189^3/_4$ թ. 100 աշակերտուհի և Մայիսին աւարտել են 13 հոգի։ Վարչութիւնը շնորհակալութիւն է յայտնում մեծ. պ. Մելիք Բախտամեանին և օր Ա. Բաբայեանին, որոնցից առաջինը բնագիտութեան և երկրորդը նկարչութեան դասերն աւանդել են ձրիաբար։ — Ընկերութեան կարուձևի IV բաժանմունքով դպրոցում սովորել են 72 աշակերտուհի, որոնցից Մայիսին աւարտել են 7 հոգի վարպետուհու վկայականով և 12՝ վարպետուհու օգնականի վկայականով։ Այդ վերջինները մնացին էլի մէկ տարի ուսումնարանում կատարելագործուելու։ Վարչութիւնը իւր առանձին շնորհակալութիւն է յայտնում դպրոցի կառավարչուհի տ. Վարվառէ Ռոտինեանին, որ միշտ այդ պաշտօնը ձրիաբար է կատարել և օր. Նունէ Խատիսեանին, որ 4 տարի է առանց վարձատրութեան հաշուապահութիւն է պարապում։ Նաև մեծ. պ. բժ. Վահան Արծրունուն, որահա երրորդ տարին է ձրիաբար բժշկում է երկու ուսումնարանի սանուհիներին և ամեն շաբաթ այցելում է Ընկերութեան ուսումնարանները։ Կարուձևի ուսումնարանի պահպանելն արժեցել է 1485 ռ.։ — Խոհարարական բաժանմունքն ունեցել է 38 ունկնդիր, որոնցից 4 ձրիաբար են սովորել. ամբողջ մուտքը եղել է 1128 ռ. 60 կ., իսկ ծախսը՝ 993 ռ. 80 կ. — զուտ արդիւնք մնացել է 134 ռ. 79 կ.

Ի վերջոյ վարչութիւնը իւր շնորհակալութիւնը յայտնեց մեծ. պ. ճարտարապետ Գրիգորեանին, որ միշտ ամենայն պատրաստականութեամբ կատարում է վարչութեան յանձնարարութիւնները, և հայ խմբագիրներին՝ յայտարարութիւնները ձրիաբար տպելու համար։

Այս հերթական զեկուցումից յետոյ վարչութեան առաջարկութիւններն էին՝ նախ պատուաւոր անդամի ընտրութիւնը և ապա՝ V բաժ. բանալու խնդիրը։

Վարչութեան առաջարկութեամբ մեծ. տ. Վարվառէ Ռոտինեանն ընտրուեց Ընկերութեան պատուաւոր անդամ, նորա X տարուայ անձնուէր գործունէութեան համար յօգուտ Ընկերութեան։

Այս վարչութեան կողմից տ. Ս. Բաբայեանը յայտնեց, որ ժամանակ է արդէն Սուրբ-Նշանի ծխական ուսումնարանը դարձնել երկդասեան V բաժանմունքով. այս հարցն ամեն տարի յետաձգվում է միջոցների պակասութեան պատճառով. այս կերպ երբէք Ընկերութիւնը իւր նպատակին չի հասնիլ, որովհետև Ընկերութեան եկամուտները փոքր փոփոխութեամբ միշտ միևնոյնն են. Վարչութեան գլխաւոր հոգսն այս հարցում սենեակի պակասութիւնն է։ Պ. ճարտարապետ Գրիգորեանը կազմել է երկրորդ յարկ շինելու համար նախահաշիւը որով մօտաւորապէս 3500 ռ. է հարկաւոր։

*Պ. Գրիգորեան* (որ ներկայ էր ընդհանուր ժողովին).—Շինութեան հիմքն այնքան ամուր է, որ երկրորդ յարկն առանց կասկածի կարելի է կառուցանել, միայն թէ քաղաքային վարչութեան կողմից կարող է դժուարութիւն լինել, որովհետև պահանջվում է փողոցի լայնութեան համեմատ շինել տների բարձրութիւնը։

*Տ. Ս. Բաբայեան*.—Հայաթումն էլ կարելի է սենեակներ շինել, բայց այսպէս թէ այնպէս փողի պակասութիւնն է, որ խանգարում է գործին։

*Օր. Մ. Մուշթաֆեան*.—Մի մասը՝ այդ ծախսի համար հարկաւոր կը լինի դրամագլխից վերցնել, որովհետև դժուար է այդչափ գումար հաւաքել։

Տ. Ս. Երիցեանը և օր. Կ. Օրբելին համաձայն էին վերջին կարծիքի հետ։

*Տ. Կ. Եւանգուլեան*. (Վ. անդ.)—Դրամագլուխը պէտք է մեծացնել. որովհետև ով գիտէ, թէ երբ կը հաւաքուի փողը նորից լրացնելու դրամագլուխը։

Բարձր Սրբազան Նախագահի առաջարկութեամբ շինութեան հարցը գլուխ բերելու համար 10 հոգուց բաղկացած յանձնաժողով ընտրուեց հետեւեալ անձինքներից՝ բարեկրօն սարկաւագուհի կոյս Խուբիան, տ. տ. Ն. Ալխանեան, Յ. Աւթանդիլեան, Մ. Դաւթեան, Մ. Միրիմանեան, Ս. Խուդավերդեան, Ն. Պատուականեան, Ն. Թամամշեան, Ս. Քալանթար և Ս. Երիցեան։

Ն. Բ. Սրբազնութիւնը պահպանիչով փակեց նիստը $2^1/_2$ ժամին։

---

13530

## ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Հոկտեմբերի 8-ին Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը կատարեց Սուրբ-Նշան եկեղեցում Ընկերութեան հիմնադիր և Վարչութեան անդամ տիկ. Կատարինէ Եւանգուլեանի հոգեհանգիստը, ներկայութեամբ բազմաթիւ անդամների։ Հոգեհանգստից յետոյ Ընկերութեան անդամները հաւաքուեցին ուսումնարանի դահլիճը ընդհանուր ժողով կազմելու՝ հանգուցեալի յիշատակը յարգելու համար։ Ընկերութեան պատուաւոր նախագահ Թեմիս Առաջնորդ Նորին Բարձր Սրբազնութիւն Գէորգ Արքեպիսկոպոս Սուրէնեանը բացեց նիստը 73 անդամի ներկայութեամբ։ Վարչութեան ատենապետուհի տիկին Սոֆիա Բաբայեանը դիմելով ժողովին՝ Վարչութեան կողմից կարդաց հետեւեալը.

«Յարգելի Տիկնայք և Օրիորդներ, մեր Ընկերութիւնը իւր գոյութեան 14 տարուան ընթացքում՝ այս առաջին անգամն է, որ այսպիսի տխուր դէպքով ընդհանուր ժողով է կազմում։

Թիֆլիզի Հայուհեաց Ընկերութիւնը կորցրեց իւր ամենաընտիր անդամներից մէկին, իսկ Վարչութիւնս՝ իւր արիաջան, աշխատասէր և ոգևորող ընկերակցին։

Տ. Կատարինէ Եւանգուլեանի մահը՝ կարելի է ասել, որբացրեց մեր Վարչութիւնը և դեռ շատ ժամանակ կ'անցնի մինչև որ մենք կը սովորենք նրա բացակայութեանը։

Յարգելի ժողովիդ թոյլտուութեամբ աւելորդ չեմ համարում այստեղ մի յիշողութիւն պատմել.—Սրանից 15 տարի առաջ մի երեկոյ հաւաքուել էինք պ. Աբգար Յովհաննիսեանի տանը, «Փորձ» ամսագրի գրականական երեկոյթին։ Հասարակութիւնից փոքր ինչ առանձնացած նստած էինք՝ տ. տ. Կատարինէ Եւանգուլեանը, Թագուհի Մելիք-Ազարեանը, Դարիա Յովհաննիսեանը և ես. այդ ժամանակ մեզ մօտեցաւ տ. Սրբուհի Երիցեանը և յայտնեց, որ Պոլսոյ «Ազգանուէր Հայուհեաց Ընկերութիւնից» ստացել է բաւական քանակութեամբ տոմսակներ այս-

տեղ բաժանելու և առաջարկեց մեզ օգնել իրան այդ գործում։ Այս առթիւ սկսուեց մեր մէջ տաք-տաք խօսակցութիւն, որ հաւաքեց մեր շուրջը միւս հիւրերին. վերջապէս տ. Կատարինէ Եւանգուլեանը՝ իրան յատուկ ոգևորութեամբ բացականչեց. «Այդ բոլորը լաւ է, տոմսակներն անշուշտ կըծախենք, փողերն ուրախութեամբ կ՚ուղարկենք. բայց ինչն է մեզ խանգարում ունենալ նաև մեր Հայուհեաց Ընկերութիւնը»։

Այս միտքն ուրախութեամբ ընդունուեց և մնացած երեկոն անցաւ ապագայ Հայուհեաց Ընկերութիւնը հիմնելու մտադրութիւններով։ Այնուհետև եռանդով կպած գործին՝ Կանոնադրութիւնը պատրաստեցինք և ներկայացրինք ի հաստատութիւն։

Վերջապէս հասաւ ցանկալի օրը՝ երբ առաջին անգամ 1882 թ. մարտի 7-ին առաջին ընդհանուր ժողովը կազմեցինք։ Ինչ ասել կուզէ, որ այդ օրը՝ ի թիւս այլոց Վարչութեան անդամ ընտրեցինք տ. Կատարինէ Եւանգուլեանին, որ կընշանակէ, թէ նա Ընկերութեան գոյութեան հէնց առաջին րոպէից ի սրտէ կպաւ Ընկերութեան գործերին։

Նրա առաջին հոգսն եղաւ Ընկերութեան անդամների թիւն աւելացնելու, որ ինքն ըստ ինքեան բաւական դժուար գործ է, բայց որ նա իւր բնաւորութեան յատուկ քաղաքավարութեամբ և սիրելի վարմունքով յաջողեցնում էր։ Բաւական չէ այդ. Ընկերութեան միջոցներն աւելացնելու նպատակով թատերաւէրների ներկայացումներ էր սարքում և ինքը մեծ տաղանդով մասնակցում. քանի անգամ պատահել է, որ իրան անհամապատասխան դերերում դուրս է եկել բեմ, որպէսզի ներկայացումը կայանայ և Ընկերութիւնը չզրկուի միջոցներից։ Վերջին անգամ նրա ջանքով պատրաստած թատերաւէրների ներկայացումն անցեալ գարնանն եղաւ, երբ նա բոլորովին տկար, ամբողջ գիշերներն անքուն լուսացնելով և անտանելի գլխացաւով մինչև անգամ անձրևին և քամուն չէր գլանում ամենից առաջ գնալ կրկնողութիւններին, և մոռանալով իւր ծանր հիւանդութիւնը՝ մէկին երգել էր սովորեցնում, միւսին հայերէն արտասանել, երրորդին բեմի վրայ ողջունել, և այլն։

Երբ թատրոնի տոմսակները յետ էին ուղարկում, մենք յուսահատվում էինք, և նա էր մեզ խրախուսողը, թէ «բան չկայ, դրա մուշտարին էլ կը գտնե՛նք»։ Այդ հոգսերով պատած գնում էր տուն և նամակ նամակի վրայ գրում, թէ եթէ այս ինչ տեղից տոմսակ յետ



ուղարկեն—ա՛յն ինչ անձին ուղարկեցէք, եթէ էլի վերադարձնող լինի, ինձ իմաց տուէք», և այլն։

Ընկերութեան միջոցները, Ընկերութեան դրամագլուխը մի տեսակ սրբութիւն էր նրա համար. պատահել է, որ մենք առատ-առատ բաներ էինք առաջարկում, և նա էր մեզ կանգնեցնում ասելով «դեռ հաշիւները տեսնենք, գանձապահին հարցնենք և ըստ այնմ գործենք։ Աստուած մի՛ արասցէ դրամագլխին ձեռք տալ. եթէ լաւ-լաւ մտադրութիւններ ունինք, թո՛ղ աշխատենք և միջոցներ էլ գտնել»։ Անցեալ տարի V բաժանմունքը բանալիս մենք արդէն հակուած էինք դրամագլխից փող վերցնելու, բայց վախենում էինք այդ մասին մինչև անգամ ակնարկել, որովհետև Վարչութիւնս դէպի նրան մեծ պատկառանք զըգալով երբէք չէր համաձայնի գործել առանց նրա հաւանութեան։ Երբ Նոր տարուն և Զատկին աղքատ ընտանիքներին փող պէտք է բաժանուէր՝ ամենահեռաւոր թաղերը նա էր վերցնում այցելելու։

Բայց տ. Կատարինէ Եւանգուլեանն ամենից շատ երախտիք ունի Ընկերութեան արհեստանոցի վրայ, որի բացմանն ամեն կերպ նպաստել է։ Այդ առթիւ հետևում էր արտասահմանի ամսաթերթերին, թէ ինչ կերպով են ընթանում այնտեղի արհեստանոցները, և սկսեց ինքը հարթակարով (гладь) պարապել՝ որ անտանելի էր նորա տկարութեան տէր մի անձի համար, որպէսզի կարողանայ դատել, թէ ո՛րքան յաջողութիւն կարող է ունենալ այդ պարապմունքը մեզանում։

Մի քանի շրջան նրա հետ Վարչութեան մէջ գործել եմ և հաստատապէս կարող եմ ասել, որ շատերը մեզանից աշխատում են գուցէ միմիայն պարտաճանաչութիւնից դրդուած, բայց տիկ. Կատարինէ Եւանգուլեանն աշխատում էր Ընկերութիւնը սրտանց սիրելուց։

Այդպիսի մի ազնիւ և անձնուէր ընկերակցի յիշատակը միմիայն մեր երախտագիտութեամբ կարող ենք պատուել, որով կ՚ապահովենք նոյն իսկ Ընկերութեան գոյութիւնը. որովհետև մի Ընկերութիւն, ինչպիսին է մերը, կարող է այն ժամանակ երկարատև լինել, երբ գիտէ բարոյապէս գնահատել իւր սրտացաւ և ջերմեռանդ գործիչներին։

Ուզենալով տ. Կատարինէ Եւանգուլեանի անունն ընդմիշտ պահպանել մեր Ընկերութեան մէջ՝ Վարչութիւնս հետևեալ մտադրութիւնն ունի յարգելի ժողովիդ առաջարկելու. հիմնել Թիֆլիզի իգական գիմնազիայում յանուն տիկին Կատարինէ Եւանգուլեանի մի մշտական թոշակ (стипендія), այսինքն երկդասեան ծխական ուսումնարանն աւարտած մի աղջիկ, որ յայտնի լինի իւր ընդունակութիւններով և լաւ

վարքով պահել մինչև նրա աւարտելը գիմնազիան։ Այդպիսի մի որդեգրուհին պէտք է անպատճառ չքաւոր հայ ուսուցչի աղջիկ լինի և Թիֆլիզի որևէ երկդասեան հայոց ծխական ուսումնարանը յառաջադիմութեամբ աւարտած։

Մենք դիտմամբ չենք սահմանափակում, որ անպատճառ մեր Սուրբ-Նշանի ուսումնարանից լինի տ. Կատարինէ Եւանգուլեանի որդեգրուհին, որովհետև Սուրբ-Նշանի ուսումնարանի աշակերտուհիները մեծ մասամբ չքաւոր արհեստաւորների զաւակներ են և այդպիսիներին գիմնազիայի բարձր ուսումը կարող է վնաս տալ՝ մեծ և ծանր պահանջմունքներ առաջ բերելով ուսումն առնողի կողմից, ինչպէս որ դրա օրինակները շատ կան մեր շուրջը. իսկ մի ուսուցիչ միշտ կը ձգտի և կընպաստի իւր աղջկայ կրթութեանը։

Հայուհեաց Ընկեր. Վարչութեանը վերապահուած կըլինի վերոյիշեալ պայմաններին համապատասխանող աշակերտուհու ընտրութիւնը, որ կըկատարուի ամեն 6, 7 տարին մի անգամ։ Վարչութիւնը նոյնպէս պայման կըսահմանի իւր որդեգրուհու վերաբերութեամբ, որ իգական գիմնազիայի ամբողջ դասընթացքն աւարտելուց յետոյ, եթէ նա խսկոյն ամուսնանալու չլինի, պարտաւորուի իւր ույժերը նուիրել Սուրբ-Նշանի ուսումնարանին, գէթ երկու տարուայ ընթացքում։

Յարգելի Տիկնայք և Օրիորդներ, եթէ նեղութիւն քաշէք Ընկերութեան գործունէութեան հաշիւները աչքի անցկացնելու՝ կըգտնէք, որ Վարչութիւնը համարեա ամեն տարի որևէ չքաւոր աղջկայ ուսման փողը վճարել է գիմնազիային, սակայն այդ փողը հասել է մի տարի մէկին, միւս տարի միւսին, այնպէս որ արդիւնքը մենք աչքով չենք տեսել։

Գանք այժմ այն հարցին, թէ ինչ միջոցներով պիտի կարողանանք իրագործել մեր ցանկացած մշտական թոշակը, յանուն տ. Կատարինէ Եւանգուլեանի։

Այս հարցին վերաբերեալ կանոնով պէտք է պետական բանկը դնել որոշեալ գումար, որի $3^{0}/_{0}$ կազմէ տարեկան 75 ռ. (մօտաւորապէս գիմնազիայի տարեկան թոշակը), որ կընշանակէ թէ՝ 2500 ռ. գումար է հարկաւոր այդ գործի համար։

Սակայն Վարչութիւնս չուզենալով շօշափել Ընկերութեան դրամագլուխը, որ հակառակ կըլինէր նոյն իսկ հանգուցեալի սկզբունքին, հետևեալ եզրակացութեանը հասաւ. յարգելի ժողովիդ հաճութեամբ, ամեն տարի ընդհանուր մուտքի $3^{0}/_{0}$, որ մօտաւորապէս կըլինի 200



ռ., կարող ենք յետաձգել յանուն տ. Կատարինէ Եւանգուլեանի մշտական թոշակի դրամագլուխը կազմելու համար, որ կընշանակէ թէ 10 տարուայ մէջ տոկոսը գումարին աւելացնելով կարևոր դրամագլուխը կըկազմուի։

Այս բոլորը մեզ չի խանգարում եկող տարուանից իրագործել մեր մտադրութիւնը, 500 ռ. տարեկան գումարը, որ ի սկզբանէ Վարչութեան տնօրէնութեանն է յանձնուած և որ միշտ գործածուել է բուն բարեգործական նպատակով — այդ գումարից ասում եմ 50 ռ. ազատ է և դրան՝ մօտ 20 ռ. էլ աւելացնելով՝ մենք կը կարողանանք հէնց եկող սեպտ. ընտրել մի որդեգրուհի, որ Կատարինէ Եւանգուլեանի անունով կըսովորի գիմնազիայում։ Այս կերպով մենք կըշարունակենք վճարել թոշակը, մինչև որ աննկատելի կերպով այդ գործի համար դրամագլուխն աճի։

Մեր ընկերութեան երիտասարդ անդամներից մէկը, որ նկարչուհի է, առաջարկեց վարչութեանս հանգուցեալի մեծադիր պատկերը նկարել և նուիրել Ընկերութեանը։ Վարչութիւնս նկարչուհուն շնորհակալութիւն յայտնելով՝ յարգելի ժողովիդ թոյլտուութիւնն է խնդրում վերոյիշեալ պատկերը կախ տալ Ընկերութեան արհեստանոցում»։

Տիկին Բաբայեանն առաջարկեց ընդհանուր ժողովին, որ նա պատրաստ է երկրորդ անգամ կարդալ իւր ատենաբանութեան II մասը, եթէ ժողովականները լաւ չհասկացան. բայց ամեն կողմից ձայներ լըսուեցին, որ լաւ են ըմբռնել։

Նորին Բարձր Սրբազնութիւնը դիմելով ժողովին ասաց, որ Վարչութիւնն սպասում է ընդհանուր ժողովի համաձայնութեանը, որ իւր առաջարկութիւնները կարողանայ կատարել։ Ի դիմաց ընդհանուր ժողովի ոտքի ելան տ. տ. Շուշանիկ Աբովեանը և Թեկլիկ Միրզոյեանը և Վարչութեանը շնորհակալութիւն յայտնելով՝ ամենայն ուրախութեամբ ընդունեցին Վարչութեան առաջարկութիւնը։

Բարձր Սրբազան Նախագահը օրհնեց Ընկերութիւնը և ցանկանալով նրան յարատևութիւն՝ փակեց նիստը։

Պրն. [illegible]

[illegible]

Մեծապատիւ [illegible],

Թիֆլիզի Հայոց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը յայտնում է Ձեզ, որ կիւրակէ, ապրիլի 14-ին, առաւօտեան ժամը 11½-ին Սուրբ-Նշան եկեղեցու Ծխական ուսումնարանի դահլիճում լինելու է ընդհանուր ժողով, որի պարապման առարկաներն են.

ա) Անցեալ տարուայ երկու ընդհանուր ժողովների արձանագրութեանց ընթերցումը.

բ) Անցեալ տարուայ ելևմտից հաշուի քննութիւնը.

գ) 1896 թ. համար կազմած նախահաշուի քննութիւնն ու հաստատութիւնը.

դ) Վարչութեան անցեալ տարուայ գործունէութեան տեղեկագիրը, և

ե) Վարչութիւնից հերթով դուրս եկող երեք անդամի և չորս փոխ-անդամի ընտրութիւնը։

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL011995